№ 45 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 26 ՆՈՅԵՄԲԵՐԻ 1894 № 45

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինն է 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան. առանձին համարները 5 շահի. արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի: Թէհրանում գալում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիւրակի եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն լեզուով: Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բաւին 1 շահի:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ“ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ

„Շաւիղը“ կը հրատարակուի Թէհրանում (մօտաւորապէս կրկին մեծութեամբ) նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ: „Շաւիղի“ բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան: Արտասահմանում՝ 3 ռուբլի կամ 8 ֆրանկ. կէս տարուանը 2 ռուբլի կամ 4 ֆրանկ:

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակները և թղթակցութիւնները հետևեալ հասցէով. Téhéran Rédaction „CHAVIGH“.

Դավրէժում ցանկացողները կարող են գրուել Բաղդասար Մելիք Սարգսեանցի մօտ, Սալմաստում՝ Յովհաննէս Ասլրէսեանցի մօտ, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբեկեանի մօտ, Նոր-Ջուղայում Յովսէփ Բաբսեղեանցի մօտ, Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեանի մօտ, Մարաղայում Մելքոն Խալափեանցի մօտ Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանցի մօտ:

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կուսակցութիւն թէ անձնական հաշիւներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Մարաղայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. արտաքին լուրեր. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ — Փայտակարան կամ Ղարաղաղ:

Կուսակցութիւն թէ անձնական հաշիւներ:

II.

Անցեալ տնգամմենք յայտնեցինք որմտադիրենք մի համառօտ ակնարկ ձգել Թէհրանի կուսակցութիւն կոչուող պատերազմիկներիգործունէութեան վերայ. գործունէութիւն, որ ապականում է հասարակական հիմնարկութիւններ:

Ի՞նչումն է կայանում այդ մի բուռ անձերի պառակտման պատճառը: Արդեօք նրանցից մի խումբը գանում է որ ամեն ինչ կղերի կօնտրոլին և իշխանութեանը պիտի ենթարկել, իսկ միւս խումբը դրա հակառակն է պնդում. արդեօք մի խումբը աւանդական պրինցիպները և այլն մերազգի հիմնաքարերն են նկատում, իսկ երկրորդը դրա դէմ է քարոզում. մի խօսքով արդեօք մէկը պահպանողական է իսկ միւսը առաջադիմական:

Եթէ ասեմ որ Թէհրանի կառուցողները այդպիսի բառերի միտքն անգամ չեն հասկանում —դա դեռ մեղմ կը լինի: Նրանց չէ ոգևորում ոչ այս և ոչ այն գաղափարը. ոչ այս և ոչ էլ այն ընդհանրական հարցը: Երկու խմբերից և ոչ մի անդամը ոչ պահպանողական է և ոչ էլ ազատամիտ:

Կառուցողները, իրար միս կռծողները, որոնք ընդամենը 20—30 անձ հազիւ լինին, տարիներից իվեր հարստահարում են ժողովրդի համբերութիւնը, որովհետև պարսկահայ ժողովուրդը ոչխարային միամտութեամբ գրաւվում է և հակւում դէպի այն խումբը կամ այն անձը, որը աւելի ճարպկութեամբ գիտէ թող փչել և շլացուցիչ խաբեբայութիւններով օծել ազգային հաստատութիւնները:

Կռիւների մենք ոչ սկզբնական պատճառը ենք ուզում մէջ բերել, որ չը գրգռենք նոյն իսկ խօլերային բացիլներին, և ոչ էլ այդ խումբերի մէջ ասպարէզ ապականող շատ անձերի կեղտոտ անձնական մի խումբը գանում է որ ամեն ինչ կղերի կօնտրոլին և իշխանութեանը պիտի ենթարկել, իսկ միւս խումբը դրա հակառակն է պնդում. արդեօք մի խումբը աւանդական պրինցիպները և այլն մերազգի հիմնաքարերն են նկատում, իսկ երկրորդը դրա դէմ է քարոզում. մի խօսքով արդեօք մէկը պահպանողական է իսկ միւսը առաջադիմական:

Եթէ ասեմ որ Թէհրանի կառուցողները այդպիսի բառերի միտքն անգամ չեն հասկանում —դա դեռ մեղմ կը լինի: Նրանց չէ ոգևորում ոչ այս և ոչ այն գաղափարը. ոչ այս և ոչ էլ այն ընդհանրական հարցը: Երկու խմբերից և ոչ մի անդամը ոչ պահպանողական է և ոչ էլ ազատամիտ:

Կառուցողները, իրար միս կռծողները, որոնք ընդամենը 20—30 անձ հազիւ լինին, տարիներից իվեր հարստահարում են ժողովրդի համբերութիւնը, որովհետև պարսկահայ ժողովուրդը ոչխարային միամտութեամբ գրաւվում է և հակւում դէպի այն խումբը կամ այն անձը, որը աւելի ճարպկութեամբ գիտէ թող փչել և շլացուցիչ խաբեբայութիւններով օծել ազգային հաստատութիւնները:

Կռիւների մենք ոչ սկզբնական պատճառը ենք ուզում մէջ բերել, որ չը գրգռենք նոյն իսկ խօլերային բացիլներին, և ոչ էլ այդ խումբերի մէջ ասպարէզ ապականող շատ անձերի կեղտոտ ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓԱՅՏԱԿԱՐԱՆ ԿԱՄ ՂԱՐԱԳԱՂ

(Շարունակութիւն 43 թուից)

Շատ լաւ, իրան թակեցիք, էլ գրքերը ինչու էք այրում. մինթէ Ս. գրքեր այրելը մեղք չեն:

«Ախր էն Ս. գիրք է. որ ըսլիսրս. բա Ս, գրքի կողքին էլ ջհուդերէն կը լինի գրած. նրանք հօ Սատանի գրքեր են, հու որ կարթի Սատանական կը դեռնի»:

Թակուող մարդը Դավրէժի ամերիկացի բողոքականներից էր որ, կամենում էր ղարաղաղցւոց մէջ բողոքականութիւն տարածել, բայց իզուր: 15 տարուց վեր է որ սոքա գրեթէ ամեն տարի գնում են Ղարաղաղ. սկզբում ղարաղաղցիք իրանց հիւրասիրութեամբ լաւ պատւում են իբրեւ հիւր Աստուծոյ, բայց երբ կամենում են կրօնի վերայ խօսել՝ հիւրասիրութեան փոխարէնն վայելում են փայտակարանցու չուպախի սաստիկ հարուածները եւ ջարդ ու փշուր յետ են դառնում:

Բողոքականները Ատրպատականի բոլոր անկիւնները մտնելով, բուն են դրել. միայն Ղարաղաղը չընդունեց այդ անկոչ հիւրերին:

Վանից գնացի Սվաւոր (Սեհող) գիւղն, որը 5 ժամուայ ճանապարհ է. Սվաւորն ընկած է փոքրիկ ձորակի մօտ. այս գիւղն ունի շատ լաւ վարելահողեր, որոց մօտերքով հոսում են գետակներ ու առուակներ, որոնք շատ օգտաւետ են հողագործ ժողովրդոց պիտոյքներին:

Սվաւորը ունի 30 տուն, որոնք ունին մի եկեղեցի առանց քահանայի. չարժարան չունին:

Այս տեղից գնացի Քրրգլուխ. այս գիւղը շինուած է մի ուղիղ լայնատարած տեղ, որի ստորին մասը բաղկացած է բարձր ժայռերով եւ այս պատճառով էլ գիւղը կոչւում է Քարագլուխ կամ Քրրգլուխ: Քարագլուխն էլ Սվաւորի պէս արգաւանդ ու պտղաբեր է: Այս տեղ շերամապահութեամբ էլ են պարապւում:

Ունի 20 տուն որոնք ունին փայտաշէն ու անշուք եկեղեցի մի քահանայով: Սոքա էլ վարժարան չունէին, թէպէտ եւ շատ էին ցանկանում բայց ինչ արած առաջնորդող չունին: Երեկոյեան ընթրիքից յետոյ մի քանի ծերերի հետ կտուրի վերայ նստած խօսում էինք յանկարծ գիւղի առջեւի բլրակից լսելի եղաւ մի ձայն, որը բարձր կոչում էր «հայ ատէր հէյ.....» Գիւղացիներից մէկը պատասխանեց նրան կոչելով «հէյ...» հեռուից կանչողը հասկացրեց գիւղացիներին, որ ինքը Սվաւորից է, եւ եկել է Տէրտէրին տանելու. Տէր հայրը գիւղումը չէր այլ գնացել ուրիշ գիւղ. իսկոյն մարդ ուղարկուեցաւ Տէր հօրը կանչելու:

Մենք մի օր էլ Քարագլուխում մնալով, ճանապարհուեցանք դէպի Ամրատուլ: Մեր ճանապարհն անցնում էր մի հովտի միջով, հովիտը բաւական շքեղ էր իւր ծաղիկներով ու աղբիւրակներով, որից իւրաքանչիւրի ակի մօտ բուսած էր մի մի պտղատու ծառ, այս ծառերի տակ, աղբիւրակների մօտ հաւ-

ցեալն ենք ուզում քրքրել։ Այնքան կեղտ է պարունակում այդ անցեալը, այնքան աւազակային գործունէութիւն է պատկերացնում նա, որ սոսկում է ազդում։

Զենք էլ ուզում լիովին դէպի այս կամ այնխումբը հակուել, որովհետև սկզբունքով նրանցից ոչ մէկն էլ համակրելի հիմք չէ ունեցել։ Այդ կռիւները հասարակական ոչ մի նշանակութիւն, կարևորութիւն ունենալ չեն կարող, չը նայելով որ այժմ, կռուող խումբերը միմիանց աչքի համար զրադարան, դպրոց ևն. են իբրև զէնք գործածում

Իբր հիմն վերցնելով մի կամ երկու աղայի գործունէութիւնը, Թէհրանի հրապարակային „գործիչները“ բաժանւում են ուղեմ—չուզեմեան կամ Պիրակոս աղայեան ու Մարկոս աղայեան կուսակցութիւնների. մէկը, որ կամենում է այսինչ աղային պահել հասարակական գործերի մէջ եթէ մինչև իսկ նրա զեղծումները հաստատուած լինէին, իսկ միւսը, որ ոչ այդ աղային է ուզում և ոչ էլ նրա արբանեակ կոշկակար մանկավարժին կամենում յանձնել ուսումնարանը։

Եւ ահա սկսում է կռիւ, ի նտրիկաններ, նոյն իսկ մատնութիւններ։

Գծուծ, գծուծ է նրանց իւրաքանչիւր քայլը, ոչ մի որբութիւն այլ ևս չէ յարգւում. միմիանց աչքի համար մինչև իսկ եկեղեցու մէջն են մտնում, Աստուծոյ սեղանը գչաւում։

Այնուհետև սկսւում է կղզմնակցական այժերի կենդրոնացումը։ Մի մասը, որ պառակտուել էր մի ւսից, կազմում է մի նոր ընկերութիւն, եղած Ուսումնասիրաց ընկերութեան աչքի համար։ Այդ նոր ընկերութիւնը կոչւում է „Բաֆֆի ընկերութիւն„։ Խեղճ Բաֆֆի լիշատակն է այժմ որ սկսվում է տանջուիլ Թէհրանցուց ձեռքում։ Նոր ընկերութիւնը

ւաքուած էին մօտակայ հայ ու Թուրք հովիւներ իրանց հօտերովը, որոնց բերել էին օրուայ տօթից ղովացնելու համար, իւրաքանչիւր հօտի մօտից անցնելուց, փաքրիկ գառնարածը մեր առաջն էր դուրս գալիս փաքրիկ գառան զրկած, որպէս զի մեզանից մի որ եւ է ընծայ ստանայ եւ երբ այս վերջինս ստանում էր, սկսում էր իր բաղդրածայն երգը, որին ձայնակցում էին միւս ընկերները. այդ նշան էր շնորհակալութեան։

Մենք քնուԹեան այդ ազատ արարածների միջով անցնելով՝ հասանք մի ծորակի, որի միջով հոսում էր մի սառն առուակ եւ երկու կողմից էլ շրջապատուած էր խիտ անտառներով։

Առուակի մօտ ճանապարհի կողքին նստած էր մի մարդ, որի դէմքը ցոյց էր տալիս նորա հայ լինելը. մենք մօտենալով բարեւեցինք նստած մարդուն։

«Աստուած օրհնի» պատասխանեց մեզ։

—Մի Թէ դուք հոգեւորական էք, հարցրի ես։

«Այո, ես Քըրդլխի տէր Մաղաքիան եմ։»

իբր պրինցիպ է ընտրում ոչ թէ այս կամ այն գաղափարը, այլ մի մեռեալ և մի հատ էլ կոշկակար մանկավարժ։ Այնուհետև ով որ այդ մեռեալի և մանկավարժի բաբեկամ կամ պաշտպան չէ լինում, նա համարւում է ստոր, գծուծ ևն. իսկ ով մօտ է նրանց երկուսին, նրանցից մէկի փեշին մի անգամ կպել է, նա սուրբ է և մեծ... Թէկուզ հասարակութեան մէջ ճանաչուած լինի որպէս բացասական անձնաւորութիւն։

Բայց այդ բաւական չէր։ Եղած ընկերութեան դէմ մի նոր ընկերութիւն կազմելուց յետոյ, հարկաւոր էր նրա ունեցածից էլ ունենալ և մինչև իսկ աւելին։ Եւ Բաֆֆի ընկերութիւնը բաց է անում մի նոր ուսումնարան, որին յանձնում է կոշկակար մանկավարժին։

Սա է այժմ դառնում նոր սռնակը, որի շուրջն է պտտում ամեն ինչ. ով մանկավարժին դէմ, է—նա հերձուածող է և վնասակար մարդ, մանկավարժի տէր—Թոդիկային լինելը երբէք չէ վրդովեցնում Բաֆֆի ընկերութեանը։

Մնում էր այժմ մի զրադարան ևս բանալ Հայկազեանի ունեցածի դէմ. բացւում է զրադարան 30 զրքով, մի կոյտ "Temps„ լրագրի ժողովածուով, մի շքեղ լամպով... բայց չէ՞ որ առաւելութիւն էլ էր հարկաւոր ունենալ. այդ առաւելութիւնը կայանում էր ընթերցարանին մի ճիւղ բանալով—որ և արւում է— և յետոյ՝ մի „երաժշտական„ կոչուող ընկերութիւն ևս կազմելով։

Իսկ նուագելու գործիքնե՞ր... մի ինչ որ ֆրանսական խանութ ունեցել է մեծ քանակութեամբ լիովին փչացած գործիքներ. դրանք գնւում են. գտնւում են մարդիկ էլ, որոնք բարի կամք են ունենում շաբաթը մի քանի ժամ կորցընել որպէս զի 5 ամսից յետոյ Պոլիովեան կոնցերտներ տալով, հարստահարեն լսողների ականջները և ահա այսօր, ամեն

—Հապա ինչու այստեղ էր նստած եւ կամ որ՞ տեղից էք գալիս։

«Զորս օր առաջ, պատասխանեց Շտէր հայրը, ինձ կանչել էին Ամրատուլ, մի երեխայ մկրտելու համար. գնացի այնտեղ եւ երեխային մկրտելուց յետոյ գնացի մօտակայ Թուրք գիւղը, մասնաւոր գործի պատճառաւ, դեռ գործս չը վերջացած այսօր մարդ եկաւ եւ ինձ կանչեց. ինչպէս ասում են Սվաւոր հիւանդ մարդ կայ. այս պատճառաւ դնում եմ այնտեղ, բայց ճանապարհին սաստիկ նեղացած լինելով նստեցի այստեղ, փոքր ինչ հանգստանալու համար»։

—Այո տէր հայր, մենք ձեր գիւղումն էինք, երեկ գիշեր եկան եւ ձեզ կանչեցին. մենք կարծում էինք, որ դուք այժմ հասած կը լինիք հիւանդին. ինչպէս յայտնեցին հիւանդը մահամերձ էր, ուրեմն շտապեցէք գուցէ հիւանդին կենդանի գտնէք։

Տէր հայրը վերկացաւ իրար հետ տխրութիւն ասելով՝ շարունակեցինք ճանապարհներս։

Տեսս ընթերցող, Թէ դարդաղցիք որչափ նեղու-

տյցելու, պատիւ կ'ունենայ շաբաթը երեք անգամ գնալ լսելու մի երաժշտութիւն, որի համար մի վարդապետ սրամտաբար ասել է թէ „մարդ բաւական չտիպով ազգասիրութիւն պիտի՞, ունենայ որ կարողանայ մի քանի բոպէ գոնէ լըսել այդ զունչականութիւնը“։

Բայց մենք միտք չ'ունինք երկարկանգ առնել այն հաստատութիւնների վերայ, որոնց պառակտումն է ստեղծել և որոնք մի քանի աղաների և կոշկակարների ձեռքում խաղալիք են եղել, որոնց մէջ մարդիկ իրանց ժամերն են կորցնում, իսկ ապագայ հայ սերունդի 50-ի չտիպ մանուկների կրթութեան գործը ապականում են միջնադարեան մանկավարժութեամբ։ Մենք երկար չենք կանգ առնում, որովհետև մեր աշխատակիցներից մէկը խոստացել է Բաֆֆի ընկերութեան հաստատութիւնների մասին մանրամասնօրէն մեզ գրել։ Առանց էն էլ երկար եղաւ մեր խօսածը այդպիսի եսական գործունէութեան մասին։

Մենք աւելի մեծ ցաւեր ունինք՝ որին հարկաւոր է նուիրել մեր բոլոր այժերը, այժմ քան երբէք։ Այնտեղ հեռու՝ մեր եղբայրները ճգնում են ազգերի շարքում տեղ գրաւել իրանց այժերով. գոյութեան հարց է, ազգային և ոչ թէ մասնաւոր՝ անհատների գոյութեան հարց. թշուառութիւններ կան, որոնց վրայ հարկաւոր է իգործ դնել մեր ամբողջ այժերը, մինչ մենք այս կողմում ստիպուած ենք դեռ ևս զբաղուիլ Փիլիպոսներով, Մարկոսներով և նրանց գծուծ հաշիւներով...

Պատմական հանգամանքի առջև է գտնւում հայը... կրկնում ենք, ինչքան որ զբաղուեցինք մեր հասարակութեան մէջ եղող սողունային անձերի հարցերով, շատ շատ է դեռ։

Մենք աւելի մեծ ցաւեր ունինք. ցաւեր մեծամեծ, անմիջական դարմանի,

---

Թիւններ են կրում քահանայ չունենալու պատճառաւ։ Մի քահանայ3—5 գիւղեր ինչպէս պէտք է կառավարէ. մի գիւղից գալիս կանչում են Թէ հիւանդ կայ տէրտէրը շուտ գայ. մինչև տէր հօր արտից կամ մի ուրիշ գիւղից ճարել ու տուն բերելը, օրեր են տեւում եւ դեռ այդ հիւանդին չը հասած, միւս գիւղից կանչում են Թէ այս ինչ մարդը մեռաւ տէրտէրին ասէք շուտ հասնի։

Ինչ անի խեղճ քահանան այս դէպքում, այնպիսի մի ժողովրդի մէջ, որ իւր կրօնասիրութեամբ սրբութեան չարժանացած մեռելին ոչ Թէ երկնքի դրախտում, այլ երկրի դիրեզմանատնում էլ տեղ չէ տալիս։

Մենք հասանք Ամրատուլ։

Ամրատուլը ընկած է լեռան ստորին մասում գտնւած մի ծորակի մօտ. այս գիւղի չորս կողմերը ընկած են վտրելահողերը ,իսկ փաքր ինչ հեռու անտառ է, մենք որքան գնում էին արեւելք այնքան էլ անտառը շատանում ու խտանում էր. ա յսկողմերը Դավրէժից հեռու լինելով ածուխ չեն

ուշադրութեան կարօտ, ցաւերը, որոնց առաջ ամեն մի հասկացող հայ պարտաճոր է մոռանալ բոլոր միւսները։ Ժամանակ է ուրեմն վերջ տալ անձնական հաշիւների և մեր ուշադրութիւնը ուղղել դէպի այդ կարեւոր և անհրաժեշտ հարցերը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Նամակ Մարզոյից

5 Նոյեմբերի 94

Այս նամակովս՝ ես մի թռուցիկ հայեացք կը ձգեմ Սօվուջբուլաղ քաղաքի դէրքի ստրատեգիական, բնակութեան և ժողովրդի բնաւորութեանի տակրթականի վերայ։ Սօվուջբուլաղը հեռու է Մարաղայից 14 ֆարսախ, ընկել է նա Ուրմիոյ ծովի հարաւային կողմը 6 ֆարսախ հեռաւորութեան վերայ. դիրքը խորդ ու բորդ ու ապառաժային է և չորս կողմից, որպէս բնական պարիսպներ, շրջապատել են նրան սեղմաձև բլուրներ, որով ստացել է շատ ամուր անառիկ դիրք։

Օդը բարեխառն է, շրջապատող բլուրների կանաչազարդ և հազար ու մի տեսակ վայրի ծաղիկներով պճնուած կողքերը մի հիանալի, շքեղ տեսարան ներկայանում են ընծայում քաղաքին։ Սօվուջբուլաղը մեծ քանակութեամբ արտահանում է դէպի եւրոպական այլ և այլ երկիրներ և Տաճկաստանի ու Պարսկաստանի զանազան քաղաքներ՝ ցորեն, գարի, բուրդ, առատ քէթիրա ու գղտոր, արջառ, ծխախոտ, ջրշուն, աղուիսենի, գայլենի, աղնիւ եւ ընտիր գորգեր եւ կապերտներ, սոցա մեծ մասը համարեա թէ շրջակայքից են բերուում քաղաք։

15000 բնակչից 700ը հրաներ, 10000ը պարսիկներ, 150ը հայեր և մնացեալը բոլորն էլ քրդեր են։

Քիւրդ ազգաբնակութիւնը չէ այն, ինչ որ էր տասը կամ քսան տարի սրանից առաջ։ Եօթանկնական և ութսունական թուականներում համարեա թէ նա ոչնչով չէր զանազանւում իւր մերձակայ լեռնաբնակ գիշատիչ ցեղերից. բայց այսօր պարադանելի բերմամբ ընկճուած լինելով նա ոչ այնքան ժամանակի, որքան տիրող տարրի ազդեցութեան ներքոյ, թողել է իւր վայրենութիւնն ու ժառանգական արհեստը—աւազակութիւնը—և պարապւում է արուեստներով։

(կը շարունակուի)

Նամակ խմբագրութեան

Ռաշտ 10 նոյեմբ. 94

«Շաւիղի» № 36-ում հրատարակուած նամակն տուած է տուել մի քանի պարոնների, մի անմիտ գաղափար կազմել իմ վերայ, որպէս թէ այդ նամակը գրել եմ յատուկ, տեղին Ղեւոնդ քահանայի խորհրդով։

Պատիւ ունիմ յայտնելու այն պարոններին, որոնք վարակուած են, այդպիսի կարծիքով, որ Ղեւոնդ քահանան ամենեւին տեղեկութիւն չէ ունեցել իմ գրածից եւ թէ իրանց կարծիքը կատարեալ սխալ է։

Բայի դորանից, հրապարակայէս յայտնում եմ, որ Ղեւոնդ քահանան վերջերս իւր մի քանի անձնական վարմունքների համար, զղուեցրել է բոլոր Ռաշտեցիներին. ես միմիայն հակակրանք եմ տածում, դէպի նա։

Թոյլ տուեցէք՝ խնդրել յարգելի խմբագրութեանդ, հրատարակել այս նամակը, «Շաւիղի» մօտակայ համարներից մէկում։

Ա. Յովսեփեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

„Новости“ թերթին հեռագրում են Լոնդոնից։ „Սասունի և Մուշի շրջակայքում քիւրդերն աւերեցին 25 գիւղ և կոտորեցին մօտ 3000 հոգի, դրանց թւում կանանց և երեխաներին“։

Խնդրում ենք որ „Շաւղին“ 1895 թուի համար բաժանորդ գրուիլ կամեցողները, այժմեանից շտապեն հասցնել իրանց հասցէներն ու բաժանորդագինը՝ որովհետև ճանապարհների հաղորդակցութիւնը մեզ հազիւ յունվարին հասցրնի քիչ հեռուից եկող նամակները. իսկ մեզ, յունվարի սկզբից իսկ, հարկաւոր է որոշել թերթի համարների թիւը։

Քաղաքումս, 20 օրից ի վեր է որ մանուկների մէջ տարածուել է դիֆտերիտ հիւանդութիւնը և բաւական զոհեր է կլանում։

Որպէս լսում ենք, Վանաք գիւղի դաստատուն իւր ռոճիկները չըստանալու համար՝ թողել է իւր պաշտօնը և եկել է քաղաք։

Նոր-Զուղայից հասած լուրերին նայելով, այնտեղի հասարակական խնդիրները ծանր վիճակի մէջ են։ Եպիսկոպոսը և տեղապահ վարդապետի միմիանց միս են կրծում և մարդիկ են թակել տալիս (կեցցեն!....) որի պատճառով և հասարակութեան մէջ էլ ընդհարումներ է տեղի ունեցել և մօտ 7—8 հոգի էլ վիրաւորուել են։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն 44 թուից)

**Իսկ „Նոր-Դարի“ մէջ քանի կայ—կը հարցնէք։—Նախ՝ Գանձակի նախկին սքանչելագործ ուսուցիչ և այժմ թափառական աստուածաբան Խաչումեանի նամակների վերջը... (փառք Աստուծոյ) նամակներ, որոնք „Առաւօտ լուսոյ“ էին կարդում և ոչինչ ասում, իսկ ինքը հեղինակը, ամերիկական միտինգներում հոսոսական ճառեր էր արտասանում։ Լոնդոնի „l'Arménie“ թերթն էլ նրան գովում էր։

Դրանից յետոյ „Նոր-Դարը“ տալիս է ընթերցողին միմիանց ետևից, դարբնած այնպիսի զզուելի լուրեր, որոնցից մէկն է այն, որ յարգելի գրագէտ Ղ. Աղայեանը Վաղարշապատում սկսել է հանգանակութիւն բանալ Շուշուայ հրաժարած ուսուցիչների ապրուստի համար։

Եթէ ճիշդ անգամ լինէր այդ, այնքան նուաստացուցիչ չէր լինել (որպէս այդ կամենում է „Նոր-Դարը“ ցոյց տալ) որքան որ „Նոր-Դարին“ յատուկ հանգանակութիւնների գործադրութեան ուրիշ ձևերը։

Մեր ստացած վերջին համարներում կարդում ենք մի քննադատութիւն „Ամուսնական տարակուսանքներ“ գրքի մասին։ Քննադատութիւն, որ իւր միջի ադարեան փտած պրինցիպներով յիշեցնում

ունում, թէ իրանց շատ քիչ է պէտք գալիս, այս պատճառով էլ անտառը մնում է։

Ամրոցումն ունի 20 տուն, մի անշուք եկեղեցի. վարժարան, սրբա էլ չունին։

Մի օր մնալով Ամրանեալ ճանապարհորդեցանք դէպի Բէյվան, Մինջուանի հայ գիւղերն նախդէն վերջացրած լինելով։

Է.

ԲԷՅՎԱՆ.

Բէյվան գաւառակը իւր դիրքով բոլորովին տարբերւում է Ղարադաղի մեծ գաւառակներից. մեր տեսած առաջին երեք գաւառակների դիրքը բաղկացած էր անտառապատ լեռներից, որոնց միջով հոսում էին առուակները եւ իւրաքանչիւր գիւղն էլ ընկած էր կամ մի լեռան ստորոտում եւ կամ մի փոքրիկ հովտում։

Իսկ Բէյվան գաւառակը մի ընդարձակ դաշտ է, որի արեւելեան կողմում է գտնւում Մուղանի դաշտը։ Այս դաշտի այն մասերում որ բնակւում են հայերը եւ որտեղ շինուած են նոցա գիւղերը, բոլոր տեղերն էլ վարելահողեր են, իսկ այն մասը որ տեղ բնակւում են Թրքերը՝ անտառապատ է. այս այն պատճառով է, որ Թրքերը չեն պարապւում երկրագործութեամբ, այլ խաշնարածութեամբ եւ վրանաբնակ են։

Բէյվանն ունի եւ լեռներ, բայց ոչ առաջիններին պէս, այլ փոքրիկ բլուրներ, որոնց ստորոտներից դուրս են բղխում սառն աղբիւրներ եւ տարածւում։

Բէյվանի եւ Մուղանի դաշտերը։

Այս գաւառակի հողը պտղաբեր ու արգաւանդ է քան թէ առաջիններինը. գիւղացիք իրանց արդիւնքի աւելորդը պարտաւորուած են տանելու ուրիշ գաւառակներում ծախելու եւ կամ շատ ածան արժէքով պէտք է ծախեն շրջակայքի վրանաբնակ Թրքերին։

Մինջուանից հասանք Բէյվանի Սերուն կամ Սուրուն հայ գիւղը։

Սերունն ունի 20 տուն որոնք, ունին մի փայտաշէն անշուք եկեղեցի, առանց քահանայի, պէտք է ասած որ Բէյվանի բոլոր գիւղերը ունին իրանց փայտաշէն անշուք եկեղեցիները։

Սերունէն գնացինք Բերդին, որը բաղկացած է 26 տնից, սորա մօտ թողնելով Սղընը վերադարձին անցանք Ասրան գիւղը։

(կը շարունակուի)

է մեզ լուսահոգի 10-րդ դարի Ս. հայրերը, յիշեցնելով նաև բժիշկ Արամեանի կրօնական բարբաջանքները Արիստակէս եպ. Սեարակեանի „Սմուսնական խնդիրներ“ անունով գրքի դէմ։

Գծուծութեամբ վարակուած առաջնորդողները, որոնցից մէկն է № 179-ի „Ըմբոստութեան ոգին մեր մէջ“ յօդուածը, „պատմական անցեալ, համամարդկային քաղաքակրթութիւն“ բառերի հետ՝ պարունակում է մի կռիւ ըմբոստութեան ոգու դէմ։ Մի յատկութիւն, որից գժբաղդաբար՞ հայը զրեթէ չունի։

Արդի եւրոպական կուլտուրական կեանքը, որի անունով յանդգնում է դեռ խօսել „Նոր-Դարը“, ոչ թէ նրանումն է կայանում, որ հասարակական գործերը դնում են կրօնաւորների ձեռքերի մէջ և կամ ղեկավարում նրանց „սրբատառ“ հրամաններով, այլ, դրա հակառակ, խլելով նրանց ձեռքից հասարակական բոլոր հաստատութիւնները և ըմբոստանալով նրանց խաւարամիտ ոտնաձգութիւնների դէմ։

Այդ գիտենալու ընդունակութիւնը կորցրել է „Նոր-Դարը“։

Եթէ այդ թերթի մէջ կարդալու արժանի կտորներ կան, դրանք էլ Կ. Պոլսի նամակներն են, հայ ընթերցողի համար խիստ հետաքրքիր նամակներ։

*** „Նոր-Դարից“ յետոյ, „Արմենիա“, Մարսէլիայի թերթն է, որ ընթերցողին զայրացնում է։

Բանից դուրս է գալիս, որ „Նոր-Դարը աւելի գերազանցում է „Արմենեային“։

„Որում շատ տուաւ, շատ խնդրեսցի“, մթթէ չը գիտէ այդ Արմենիան, որ այժմ աֆերիստութեան մէջ լողում է և որ դեռ համարձակութիւն ունի „յեղափոխական“ կոչուելու։

Ամբողջ համարներ լցնում է սեագրլուխների գործունէութեան մասին տեղեկագիրներ տալով և կամ այնպիսի յօդուածներով, որոնց սկի ոչ մի թերթ լայեղ չէր անել տպել, որքան որ նա „Արձագանք“ իսկ լինէր։

Միթէ արժէր դրա համար գնալ Մարսէյլ նստել և, սուրբ զգացմունքների անունով փողեր հաւաքել։

Վերցնենք նորա համարներից մէկը որպէս օրինակ։ Մեզ հասած ամենավերջին համարը № 28 է։ Ահա նրա բովանդակութիւնը. թող ընթերցողը դատի։

1) „Վեհափառ կաթուղիկոսի կոնդակը Վառնայի հոգևոր հովուին“. մի կոնդակ որով կաթուղիկոսը շնորհում է Վառնայի հովուին իրաւունք՝ կրելու ոսկեզօծ խաչ։ 2) „Նամակ Սալմաստէն“։ Մի 4-5 սիւնակ բռնող նամակ, որում յայտնում է թէ ինչպէս Թավրէզի առաջնորդը վարդապետ է ձեռնադրել անբարոյական կեանքովը յայտնի Վեհունի անունով մի անձի, որը Բաթումի սրճարաններում օրն ի բուն թղթախաղով էր զբաղուած։ 3) „մի ակնարկ Ս. Լուսիածնի միամեայ կեանքի վերայ“, արտատպած „Նոր-Դարից“ (աչքներս լոյս)։ 4) „Հայեր ի Թիւրքիա“. ուր հաղորդըւում է Սսոյ կաթուղիկոսի հիւանդութիւնն ու Պատր. փոխանորդի պալատգնալը միայն։ 5) Զարի մահը 6) Հողագործների և գինեգործնեյի (sic) վիճակը Թիւրքիայի մէջ“։ Մի անմիտ երկտող գրուածք։ 7) բանասիրական „Հայ գիւղացին“, մի անմեղ ուսումնասիրութիւն պարսկահայ գիւղացու և... Երրորդ երեսից սկսած՝ 8) Ծախու գրքեր և յայտարարութիւններ... Այդ բոլորը կազմում են „յեղափոխական“ անուանուելու լրբութիւնն ունեցող թերթի նիւթը։ Ժամանակ է որ ժողովուրդը հասկանայ թէ որպիսի շանտաժիստի հետ գործ ունի։

*** Ինչ ասել „Արձագանգի“ մասին։ Ի՞նչ պրինցիպներ ունի այդ Տալմուտիստ սաւանը. ինչպէս է հաշտեցնում իւր սուտ-ճգնաւորական, յաճախ կեղտ արտայայտող յօդուածները՝ բանասիրականում տպւող անգլիացի մեծ գործիչ Թոմաս Մօորի մասին գրուած սիրուն յօդուածի հետ։

*** „Հայրենիք“ թերթը, որ հայերէն լեզուով մի եւրոպական թերթ է, աշխոյժով և խղճմտանքօրէն ծանօթացնում է մեզ եւրոպական քաղաքակրթութեան ընթացքի, մտաւոր կեանքի, գրականութեան / գիտութեան հետ։ Երևի հայկական կեանքի մասին խօսելը նրան լիովին արգելուած է։ Զը նայելով դորան, յաճախ կարելի է կարդալ նորա մէջ գաւառական հետաքրքիր թղթակցութիւններ։ Իսկ առաջնորդողները, որոնք խիստ համակրելի ուղղութեամբ են գրուած, ախորժանօք են կարդացւում։

„Իրանից անկախ“ պատճառների ճընշումը շատ ակներև ազդեցութիւն է թողել այդ թերթի վերայ։

*** Մնում է «Տարազը», որովհետև «Մուրճի» վերջին համարը դեռ չենք ստացել (№ 10-ը)։ Տարազը շատ բան է խօստանում և առայժմ ոչինչ չէ տալիս։ Մոռանում է որ այն ժամանակ, որում գործողներին խմբագիրը մեղադրում է իբր վնասող թերթին, այն ժամանակ էր միայն շաբաթաթերթի ոսկէ դարը։

Խօստումների կատարմանն ենք սպասում, գոհ կը լինենք եթէ իւր չը հաւանած անձերի պէս կարողանայ տանել թերթը։ Պ. Նազարեանը շատ երկար է հարստահարել ժողովրդի համբերատարութիւնը, այնուամենայնի և ուրախութեամբ կողջունենք նորա վերանորոգութիւնը, եթէ յաջողուի։ Դեռ այժմ նորա մէջ ոչ աչքի խփող նորոգութիւն է նկատւում և ոչ էլ փոփոխութիւն։

—

*** Կովկասեան թերթերը հաղորդում են որ առաջնորդները շարունակում են չարվադարների քահանայ ձեռնադրել եւ այդ՝ կատարւում է հայոց կաթուղիկոսի քթի տակ—Երեւանում, մի ինչ որ կիսախելագար Կիւրեղ վարդապետի ձեռքով։ Փաստերի մասին տես «Մշակ» № 127, Երեւանից թղթակցութիւնը։

Նոյնը գրում են նաեւ Դավրէժի առաջնորդի մասին։ Բաւական չէր արդեօք սրբազանի Սալմաստին տուած վարդապետը....

*** Երկու հետաքրքրութիւններ Կովկասեան թերթերից։

Գէորգեան ճեմարանի նոր տեսուչ, քնաթաթախն Կոստանեանը, արգելել է լսարանցիներին խօսելու դասարանցոց հետ՝ արտաքսելու պատիժով։ Այդ որ Նիամ-Նիամների մանկավարժութեան պրինցիպներից է։ Մարդու հաւատալը չէ գալիս, եթէ փոշեպատ Կոստանեանի անունը չը լինէր։

Երկրորդ լուրը այն է, որ Էջմիածնի փողը պակասել է եւ վանքը ուզում է փոխառութիւն անել։ Այս լուրը պէտք է որ ճիշտ լինի։ Տարին անցաւ որ Խրիմեանը կաթուղիկոս է։ Կ. Պոլսի պատրիարքարանը, Ս. Կարապետի վանքը եւ Վարազը՝ վրկայ են։ Վեհ. Հայրիկը շատ բարի է եւ առատաձեռնութեան մէջ մեծ համբաւ ունի։

*** Մի ուրիշ լուր եւս. պ. Պերճ Պռոշեանը սկսել է «Նոր-Դարում» գրել. հրեւի յոգնել է։ Կարդացինք որ ուզում է քահանայ ձեռնադրուել. այստեղ է ասած որ, «եթէ մարդ չը դարձաւ, գոնէ քահանայ կարող է դառնալ»....

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Հեռագիր։ Լոնդոնից հեռագրում են, որ նորից մի աւելի մեծ եւ բարբարոս կոտորած է տեղի ունեցել Սասնոյ լեռներում։ Լորդ Զէմբրլէյնը հարցանդումներ է արել իմանալու համար պատճառը։ Մանրամասնութիւնները դեռ յայտնի չեն։

—Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը հեռագիր է ստացել Ադանայից, որի մէջ ասուած է „Հանընի մէջ պատահեց հրդեհ. վեց հարիւր տներ այրած եւ երկու հազարի չափ անձինք անպատսպար եւ օգնութեան կարօտ վիճակի մէջ կը գտնուին“։

„ՇԱՒԻՂԻ“ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

Ռաշտ. Դ. Սարվարեանցին։ № 42-ի Ա. Ցովսեփեանցի նամակ չէք հասկացել. նորից կարդացէք։

Մարաղա. Կացինին։ Ձեր նամակը չի տպուիլ. մենք ձեզ չենք ճանաչում, իսկ դուք ոչ մի փաստ չէք տալիս որ ձեր յիշած անձը մատնիչ է, „պատրաստ է քանդելու խեղճ ժողովրդի դարերից ի վեր շինուած ամուր դիրքը“։

Թավրէզ։ պ. Միրզոյեանին։ Ձեր նամակը եթէ տպեցինք, այդ մի շնորհք էր ձեզ համար, որ ուրիշ անգամ չի լինիլ. հայհոյել շատ էք սիրում։ Ձեր կռիւները մեզ զզուեցրին, զզուեցրին նաեւ «Սէր» կոչւող ձեր ընկերութեան հաշիւները։ Ազդարարում ենք ձեզ որ ձեր եւ ձեր մասին լուր տւող պարոնի մէջ եղող վէճի համար փակում ենք „Շաւղի“ էջերը. ուրիշ տեղ ընտրեցէք միմեանց հայհոյելու համար։ Ձեր մասին տուած լուրի ճշտութիւնը մեզ ուրիշներն էլ են ասել։

Թավրէզ. Տիկին Օլ. Ղազարեանց.—Դուք մի ժամանակ սիրուն յօդուածներ էիք գրում, ինչու յոգնեցիք. շարունակեցէք խնդրեմ։

Թավրէզ. Հասս. Ձեզնից լուր չունինք, ինչու էք լռել։

Արտօնատէր—Հրատարակիչ՝

ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ